# Տեղեկագիր օտարերկրացիների համար


ԳԼՈՒԽ I
ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ԼՐԱՑՆԵԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ II
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
2.2 ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
2.3 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ, ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ
2.4 ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ
2.5 ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ
2.6 ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ
2.7 ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՐՏԵՐԿԻՐ ՄԵԿՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ
2.8 ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
2.9 ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ԳՈՐԾԻ ԱԿՏԵՐԻՆ
2.10 ՊԵՏՏՈՒՐՔ

ԳԼՈՒԽ III
ՎԻԶԱՅԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ
3.1 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ
3.2 ՊԵՏԱԿԱՆ ՎԻԶԱՅԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ
3.3 ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱՅԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ
3.4 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ
3.5 ՊԱՏԱՍԽԱՆԻ ՁԵՎԸ
3.6 ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԳԼՈՒԽ IV
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
4.1 ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ՈՐՊԵՍ ՀԻՄՔ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ
4.2 ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
4.3 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐ
4.4 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ
4.5 ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
4.6 ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄ
4.7 ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ, ՈՐԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ
4.8 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹՈՂՆԵԼԸ

4.9 ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄ
4.10 ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ
4.11 ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ


## ԳԼՈՒԽ V

## ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ


5.1 ՈՐՈՇՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ
5.2 ԱՆԴԱԴԱՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ - ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ
5.3 ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
5.4 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5.5 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹՈՂՆԵԼԸ
5.6 ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄ
5.7 ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՎՈՒԹՅԱՆ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ
5.8 ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ.


## ԳԼՈՒԽ VI

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԵԶԻԴԵՆՏԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ


**6.1** ՈՐՈՇՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ
**6.2** ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
**6.3** ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
**6.4** ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹՈՂՆԵԼԸ
**6.5** ԱՆՁԻՔ, ՈՎՔԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՍՏԱՆԱԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԵԶԻԴԵՆՏԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
**6.6** 5 ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԱՆ – ԱՆԴԱԴԱՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
**6.7** ԱՆԴԱԴԱՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ - ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ
**6.8** ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԵԶԻԴԵՆՏԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄ
**6.9** ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ
**6.10** ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԵԶԻԴԵՆՏԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ
**6.11** ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԵԶԻԴԵՆՏԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾԸ


## ԳԼՈՒԽ VII

## ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ


7.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7.2 ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԸ ՓՈԽԵԼԸ
7.3 ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ
7.4 ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ
7.5 ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

## ԳԼՈՒԽ VIII
## ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**8.1** ԺԱՄԱՆԱՀԱՏՎԱԾԻ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ
**8.2** ԳՈՐԾԻ ԱԿՏԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՑՈՒՄ
**8.3** ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ, ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Եւ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ
**8.4** ԲՈՂՈՔ

## ԳԼՈՒԽ I
## ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ԼՐԱՑՆԵԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

**Լրացնելով նշված միջնորդությունը՝ անհրաժեշտ է հիշել.**

- լրացնել այն ընթեռնելի լեհերենով.
- Լրացնել միջնորդության բոլոր կետերը համապատասխան իրականությանը.
- լրացնել բոլոր աղյուսակները տպագիր տառերով, որոնք անհրաժեշտ է գրել համապատասխան վանդակներում.
- Եթե նախկինում օգտագործել եք այլ անձնական տվյալներ, անհրաժեշտ է այդ մասին տեղեկացնել հիմնավորման մեջ.
- Հայտնել փաստացի կացության վայրը (վայրը, որով կատարվելու է նամակագրությունը).
- Նախկինում դատվածություն ունենալու վերաբերյալ հատվածում անհրաժեշտ է տեղեկացնել բոլոր ներկայացված դատավճիռների, ինչպես նա– քրեական դատավարությունների կամ իրավախախտումների – զանցանքների մասին.
- տրված դատավճիռների շուրջ անվստահ լինելու դեպքում, ինչպես նա– դատական վարույթի շուրջ – չավարտված դատավարությունների դեպքում (ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գումարային պատժի մուծումը չի նշանակում, որ դատավարությունը տեղի չի ունեցել, – սույն գործով դատավճիռ չի կայացվել)
- կցել պետտուրքի մուծման անդորրագիրը.
- կցել միջնորդությանը տրված չափանիշներին համապատասխանող լուսանկարներ.
- միջնորդության ավարտին ստորագրել, ինչպես նա– գրել անունը – ազգանունը լատինական այբուբենով.
- ընտանիքին միանալու նպատակով սահմանված ժամկետով կացության թույլտվություն ստանալու դեպքում սահմանված ժամկետով կացության (Օտարերկրացիների մասին օրենքի **հոդված 53, ենթակետ 1, կետ 7**) միջնորդությունը ստորագրում է այն օտարերկրացին, ով բնակվում է Լեհաստանի Հանրապետությունում, իսկ անչափահաս երեխաների համար պահանջվում է բոլոր անձերի ստորագրությունը, ովքեր օրենքով հանդիսանում են նրանց խնամակալները.
- ներկայացնել վավեր փաստաթուղթը. Բացառիկ – հիմնավոր դեպքերում, երբ օտարերկրացին չունի վավեր փաստաթուղթ – չունի հնարավորություն ստանալու նման փաստաթուղթ, կարող է ներկայացնել անձը հաստատող այլ փաստաթուղթ.
- միջնորդությանը կարելի է կցել ցանկացած փաստաթուղթ, որը կարող է հաստատել միջնորդությունում բերված տեղեկատվությունը, ինչպես նա– որոնք կարող են օգնել գործի արագ քննությանը.

- Կասկածանքի դեպքում դիմել վոեվոդության  աշխատակցին օգնության համար:

# ԳԼՈՒԽ II

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## 2.1 ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

- Օտարերկրացիների մասին 2003 թ. հունիսի 13-ի օրենքի (Օր, տեղ. 2006թ. թիվ 234, կետ 1694 հետագա բարեփոխումներով).
- 1960 հունիսի 14-ի վարչական օրենսգիրքը ( Օր, տեղ. 2000 թ. թիվ 98, կետ 1071 հետագա բարեբոխումներով).
- 2009 թ. հուլիսի 13-ի Եվրախորհրդարանի – Եվրամիության թիվ 810/2009 կարգադրություն, որը համապատասխանում է վիզային օրենսգրքին (Օր, տեղ UE L 243 z 15.09.2008, էջ. 1).

## 2.2 ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Օտարերկրացին կարող է գտնվել Լեհաստանի Հանրապետության տարածքում, եթե ունի .
1) Վավերացրած ամձնագիր.
2) Վավեր վիզա կամ այլ փաստաթուղթ, որի հիման վրա կարող է մուտք գործել – մնալ վերոնշյալ տարածքում այն դեպքում, եթե դա պահանջվում է.
3) Այլ պետություն մեկնելու թույլտվություն կամ այլ պետությունում բնակվելու թույլտվություն, եթե պահանջում է տրանզիտը:

Օտարերկրացին կարող է ճանապարհորդել – գտնվել Շենգենյան գոտու երկրների տարածքում (Ինչպես նա– Լեհաստանի Հանրապետության տարածքում) առանց վիզայի պահանջի ոչ ավելի քան 3 ամիս, որը ներառվում է 6-ամյա ժամանակահատվածում՝ պետական վիզայի հիման վրա կամ կացության թույլտվության հիման վրա, որը տրվել է Շենգենյան երկրներից մեկի կողմից, Լեհաստանի դեպքում՝ կացության քարտերը այնքանով, որքանով իրականացնում են մուտք գործելու համար ընդհանուր պահանջները, ինչպես նա– Շենգենյան երկներում կացության համար անհրաժեշտ պայմանները, այսինքն.

- Ունի վավերացրած անձնագիր.
- Կարող է հիմնավորել պլանավորված կացության նպատակը – պայմանները, ինչպես նա–
- Ունի բավականաչափ ֆինանսական միջոցներ բնակության համար կամ դրանց վաստակելու համար օրենքով թույլատրված միջոցներ, ինչպես նա–
- Չի համարվում վտանգ հանրային կարգուկանոնի, ներքին անվտանգության, հանրային առողջության կամ անդամ երկրներից որ–է մեկի հետ միջազգային հարաբերությունների հարցում, մասնավորապես չեն կատարվել գրառումներ տվյալ անձի նկատմամբ անդամ երկրներից որ–է մեկի բազայում՝ արգելող վերջինիս մուտքը:

Շենգենյան երկրներին վերաբերող. Ավստրիա, Բելգիա, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Հունաստան, Իսպանիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդեր, Գերմանիա, Պորտուգալիա, Շվեդիա, Իտալիա, Էստոնիա, Լիտվա, Լատվիա, Մալթա, Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Հունգարիա, ինչպես նա– Շվեյցարիա, Նորվեգիա – Իսլանդիա (վերջին 3 պետությունները Շենգենյան գոտում են, – չեն հանդիսանում ԵՄ անդամ)

**Հարկ է ընդգծել, որ Միացյալ Թագավորությունը, Իռլանդիան, Կիպրոսը, Բուլղարիան, ինչպես նա– Ռումինիան հանդիսանում են ԵՄ անդամ, որոնք չեն պատկանում Շենգենյան գոտում:**

## 2.3 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ, ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Լեհաստանի Հանրապետության տարածքում օտարերկրացիների կացության օրինականացման գործերով միջնորդությունները – հայտերն անհրաժեշտ է

- **գրանցել լեհերենով.**
- **բնօրինակով կամ կրկնօրինակով, որը համապատասխան հիմնարկությունների կողմից հաստատված է բնօրինակին.**
- բնօրինակի փոխարեն կողմը կարող է ներկայացնել փաստաթղթի պատճենը, եթե համապատասխանությունը բնօրինակի հետ հաստատված է նոտարի կողմից կամ տվյալ գործում նշանակված լիազորված մարմնի կողմից, որը փաստաբան է, իրավական խորհրդատու, լիազոր խորհրդատու, լիազորված հարկային խորհրդատու. **չի վերաբերում անձնական փաստաթղթերին (անձնագիր)**
- **թարգմանված լեհերեն՝ երդվյալ թարգմանչի կողմից այն դեպքում եթե փաստաթղթերը օտար լեզվով են** – ներկայացվում են տվյալ գործում որպես փաստ (չի վերաբերում անձնագրին)

## 2.4 ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ

**Գործեր, որոնց օրենքների – կանոնակարգերի հիման վրա հարկավոր է ընթացք տալ,**

- Եթե գործերում անհրաժեշտ են բացատրություններ, ապա դրանք (բացատրությունները) պետք է տրվեն ոչ ավելի ուշ քան մեկ ամսվա ընթացքում.

- **Բացառիկ դժվարությունների դեպքում՝** ոչ ուշ քան երկու ամսվա ընթացքում՝ հաշված գործավարության առաջին օրից.

- Իսկ բողոքարկման գործավարության ընթացքում քննվում է մեկ ամսվա ընթացքում՝ հաշված բողոքարկման ընդունման օրվանից.

Մշտական բնակության կամ Եվրոպական երկրաժամկետ ռեզիդենտի կացության թույլտվության վերաբերյալ գործավարությունը պետք է ավարտվի ոչ ուշ, **քան երեք ամսվա ընթացքում՝** հաշված գործի ընթացքի առաջին օրից:

- Բողոքարկման գործավարությունը- պետք է ավարտվի երկու ամսվա ընթացքում՝ հաշվելով բողոքը ստանալու առաջին օրից:

Նախքան սահմանված ժամկետով ժամանակավոր կացության/մշտական բնակության/եվրոպական երկարաժամկետ ռեզիդենտի կացության թույլտվության միջնորդության մասին որոշման (դեցիզիա) ներկայացումը համապատասխան **վոեվոդան պարտավոր է միջնորդությամբ դիմել Սահմանապահ ծառայության բաժնի պարետին, Վոեվոդական ոստիկանության պարետին. Ներքին անվտանգության գործակալության ղեկավարին,** իսկ անհրաժեշտության դեպքում

նա– այլ մարմիններին՝ **տեղեկատվություն տրամադրելու, թե օտարերկրացու մուտքը – կացությունը Լեհաստանի Հանրապետությունում արդյոք ներկայացնում է վտանգ երկրի պաշտպանությանը – անվտանգությանը, կամ անվտանգության կամ հասարակության կարգի պահպանմանը:**

Հաշվի առնելով փաստը, որ վերոհիշյալ մարմինները պարտավոր են պահանջվող տեղեկատվության փոխանցումը իրականացնել 30 օրվա ընթացքում, կարելի է կանխատեսել, որ **տվյալ գործի ընթացքը կարող է տ–ել ավելի քան 30 օր**:

**Վերոհիշյալ ժամկետներում չքննված յուրաքանչյուր գործի դեպքում առաջին – երկրորդ ատյանների մարմինները պարտավոր են տեղեկացնել կողմին՝ ներկայացնելով ուշացման պատճառները – նշելով գործի լուծման համար նոր ժամկետը:**

## 2.5 ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ

**Կողմը կարող է գործել լիազորված անձի կողմից, եթե գործի բնույթը չի պահանջում նրա ներկայությունը: Կողմից լիազորված անձը կարող է լինել ֆիզիկական անձ, որը ունի նման գործողությունների համար իրավունք.**

- Լիազորագիրը պետք է ներկայացվի **գրավոր տեսքով կամ գրանցված լինի արձանագրությունում.**
- Լիազորագրված անձը ակտերին կցում է **բնօրինակը կամ լիազորագրի վավեր լինելու թույլտվությունը.**
- Լիազորագրի հետ միասին գործի ակտերին անհրաժեշտ է կցել **17 զլոտի չափով մուծված պետտուրքի անդորրագիրը.**
- **Լիազորագիրը հնարավորություն է տալիս օտարերկրացուն ներկայացնել իրեն տվյալ գործում, ինչպես նա– համապատասխան վաեվոդությանը – Օտարերկրացիների հարցերով վարչության ղեկավարին:**

## 2.6 ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Ողջ նամակագրությունը (Ծանուցագիրը, կանչը, դեցիզիան, որոշումը – այլն) պետք է իրականացվի փոստի միջոցով՝ ստացման մասին ծանուցման հավաստագրով կամ առաջին կամ երկրորդ ատյանի մարմինների միջոցով:
**Նամակագրությունը փոխանցվում է կողմի տված հասցեով կամ այն վայրերում, որտեղ նա կարող է գտնվել**: Նամակագրությունը կարող է իրականացվել նա– կողմի աշխատանքի վայրում – փոխանցվել լիազորված անձին, ում լիազորում է աշխատատուն նամակագրության համար:

## ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Գործավարության ընթացքում կողմի ներկայացուցիչը – լիազորված անձը **պարտավոր են տեղեկացնել վարչական – հանրային մարմիններին հասցեի – բնակավայրի յուրաքանչյուր փոփոխության մասին:** Գործավարության ընթացքում բոլոր նամակները միշտ ուղարկվում են նամակագրական հասցեով, որը որպես վերջին հասցե կողմը հայտնել են սույն մարմնին:

- **Այն դեպքում, եթե չեն պահպանվել վերոհիշյալ պարտականությունները, նամակի հանձնումը վերջին հասցեով կհամարվի որպես հանձնված.**
- **ՀԱՍՑԵԱՏԻՐՈՋ ԱՆՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ:** Հասցեատիրոջ անհասանալեիության դեպքում նամակը կարող է փոխանցվել ստորագրության դիմաց կողմի ընտանիքի չափահաս անդամներից մեկին, հար–անին կամ շենքի պահակին (դռզորցա) այն դեպքում, եթե այդ անձիք

կիավաստեն, որ կփոխանցեն նամակը: Չար–անին կամ շենքի պահակին նամակի փոխանցման մասին հասցեատերը տեղեկացվում է կողմի բնակավայրի փոստային արկղի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բնակարանի դռան անկյան միջոցով:

## ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

- **Կողմին**- հայտնած **հասցեով**, իսկ երբ կողմը գործում է լիազորված անձի միջոցով՝ տվյալ անձին:
  - **Կողմը պարտավոր է հաստատել նամակի ստացումը իր ստորագրությամբ՝** նշելով ստացման ամսաթիվը: Եթե կողմը չի համաձայնվում ստորագրել ստանալու մասին հավաստագիրը, ապա հանձնողը ինքն է նշում հանձնման ամսաթիվը, նա– նամակ ստացողի տվյալները, ինչպես նա– հավաստագիրը չստորագրելու պատճառը:
  - **Եթե կողմը հրաժարվում է ընդունել նամակը**, որ հասել է փոստով կամ այլ միջոցով, նամակը կվերադարձվի ուղարկողին բացատրությունով, որ մերժվել է ստացողի կողմից, ինչպես նա– մերժման ամսաթիվը: Նման դեպքում համարվում է, որ նամակը փոխանցվել է այն օրը, երբ հասցեատերը մերժել է դրա ստացումը:
- **Լիազորված անձիք**: Եթե կողմը նշանակել է լիազորված անձի, ապա նամակները փոխանցվում են լիազորված անձին: Եթե նշանակվել են **մի քանի լիազորված անձիք**, ապա կողմը տալիս է դրանցից նամակագրությունը ստանալու իրավասու անձի հասցեն – տեղեկացնում է դրա մասին գործը վարող մարմնին: **Եթե օտարերկրացին չի նշանակում նման լիազորված անձի,** ապա նամակները կփոխանցվեն նրանցից որ–է մեկին:

## ՎԵՐՈՆՇՅԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՆԱՐԻՆ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

- Կողմի փոստային բաժանմունքում նամակները պահվում են 14 օր, եթե դրանք ուղարկվում են փոստի միջոցով.
- Նամակը հանձնվում է 14 օրյա ժամկետով համապատասխան շրջանային (քաղաքային) հիմնարկությանը կամ լիազորված անձին կամ մարմնին.

Ծանուցումը թողնված նամակի մասին – տեղեկությունը նամակը ստանալու մասին պետք է իրականացվի 7 օրվա ընթացքում, որը հաշվվում է նամակի հանձնման մասին ծանուցագիրը ստանալու օրվանից, այն տեղադրվում է կողմի բնակավայրի փոստային արկղում, իսկ դրա անհնարին լինելու դեպքում՝ հասցեատիրոջ բնակարանի դռան անկյունում կամ նրա բյուրոյում կամ այլ տարածքում, որում հասցեատերը իրականացնում է իր աշխատանքային պարտականությունները, կամ հասցեատիրոջ բնակության վայրի նկատելի տեղում:

Վերոհիշյալ ժամանակահատվածում փոխանցումը չստանալու դեպքում թողնվում է երկրորդ ծանուցագիրը, որը կարելի է ստանալ **առաջին ծանուցագրի հանձնման օրվանից ոչ ավելի ուշ քան 14-օրվա ընթացքում:**

**Նամակի փոխանցումը համարվում է իրականացված սահմանված վերջին ժամանակահատվածի վերջին օրվանից սկսած, իսկ նամակը մնում է գործի ակտերում:**

## 2.7 ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՐՏԵՐԿԻՐ ՄԵԿՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

- Արտասահման մեկնելու դեպքում անհրաժեշտ է նշանակել **լիազորված անձի, ով պատասխանատու կլինի նամակագրական փոխանցումները կատարելու**

**համար, – այդ մասին անհրաժեշտ է տեղեկացնել տվյալ գործավարությունով զբաղվող մարմնին**: Վերոնշված պարտականությունները չկատարելու դեպքում նամակը համարվում է փոխանցված մինչ այդ հայտնած հասցեով:

- **Կողմը, որը բնակվում է արտահասմանում** կամ ունի աշխատանքային վայր արտասահմանում, ով չի նշանակել իր գործերի վարման համար տեղում (Լեհաստանում) ապրող լիազորված անձի, պարտավոր է տեղեկացնել, թե ով է պատասխանատու իր փոխանցումները Լեհաստան ուղարկելու համար: Այն դեպքում, **եթե նա չի ներկայացնում Լեհաստանում փոխանցումների համար լիազորված անձին**, ապա կողմի համար նախատեսված նամակները կմնան գործի ակտերում՝ համարվելով ուղարկված:

## 2.8 ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Միջնորդությունը – դիմումները, որոնք կազմվել են լեհերենով, տրվում են այդ գործողության համար սահմանված ժամկետում:**

**Տվյալ գործողության իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը պահպանվում է, եթե նամակը ուղարկվել է մինչ–.**

- ուղարկվել է էլեկտրոնային ֆորմատով՝ Հանրային ադմինիստրացիայի մարմինների կողմից վավերացրած անդորրագրերի հիման վրա հանրային առաջադրանքներ կատարող անձանց մասին 2005 թ. փետրվարի 17-ի օրենքի հիման վրա.
- հանձնվել է **Լեհական փոստային բաժանմունքին** հանրային օպերատորի կողմից.
- Հանձնվել է **Լեհաստանի հյուպատոսական բաժնին.**
- Հանձնվել է ռազմական բաժանմունքի զինվորի միջոցով.
- Հանձնվել է ռազմածովային ուժերի նավապետի կողմից.
- Ազատազրկված անձը կարող է փոխանցել բանտի ղեկավարությանը.

**Նամակագրությունը կարելի է նաև հանձնել անմիջականորեն այն մարմիններին, որոնք քննում են գործը.**

**Բացի այդ նշված գործողությունը ընդունելի է.**

- Արտասահմանյան փոստային բաժնի միջոցով ՎՆ ժամկետը համարվում է լեհական փոստի ստացումը (լեհական փոստային բաժանմունքի դրոշմի նշած ժամկետը):
- Եթե հանձնվում է կուրյերական ընկերության կողմից (փոխանցումը կարելի է իրականացնել ինչպես Լեհաստանում, այնպես էլ արտերկրում)-փոխանցման ժամկետը՝ համապատասխան մարմին:

**Եթե օտարերկրացին պակասող նյութերի լրացման համար սահմանված ժամկետի ընթացքում չի ներկայացրել պակասող նյութերը**, ապա հաշված բացատրագրի ներկայացման օրվանից 7 օրվա ընթացքում նա կարող է միջնորդել լրացումները կատարելու համար նոր ժամկետ ստանալու համար: Օտարերկրացին պարտավոր է հաստատել, որ սահմանված ժամկետում անհրաժեշտ նյութերի տրամադրման բացակայությունը չի եղել իր պատճառով: **Ներկայացնելով խնդրագիրը՝ անհրաժեշտ է գրել բացատրագիր, դրա հետ միասին պետք է ներկայացվեն բոլոր բացակայող նյութերը:**

## 2.9 ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ԳՈՐԾԻ ԱԿՏԵՐԻՆ

- Գործի վարույթի բոլոր փուլերում կողմն իրավունք ունի ծանոթանալու գործի ակտերին, տարբեր գրառումներ անել, պատճենել – կրկնօրինակել: Նման իրավունքը ընձեռնվում է նա– վարույթը ավարտելուց հետո.
- Կողմը կարող է պահանջել գործի ակտերի վավերացված պատճեն կամ կրկնօրինակը, կամ պահանջել գործի ակտերից վավերացված պատճեններ, եթե դա հիմնավորված է **կողմի կար–որ շահերով.**
- Գործի ակտերի ուրաքանչյուր վավերացված կրկնօրինակի – պատճենի համար գանձվում է մինչ– մեկ էջի կամ մեկ էջի դիմաց **5 զլոտ** պետտուրք.
- **Գործավարությունում պարբերական մասնակցության դեպքում** հանրային վարչական մարմինները պարտավոր են կողմերին հնարավորություն տալ անմիջական մասնակցություն ունենաու վարույթի բոլոր փուլերում, իսկ մինչ– որոշման(դեցիզիայի) ներկայացնելը տալ հնարավորություն արտահայտվելու հավաքված նյութերի – առաջարկվող պահանջների շուրջ.
- Կողմը կարող է ծանոթանալ **գործի շրջանակներում հավաքված փաստարկային նյութերին,** լրացնել միջնորդությունը, ինչպես նա– հայտնել տեղեկությունները արձանագրությունում.

## 2.10 ՊԵՏՏՈՒՐՔ

**Բոլոր տեսակների կացության տրման համար պետտուրքը վճարելու պարտականությունը կողմը ստանում է միջնորդությունը վռեվոդություն տալու պահից**: Այդ գանձումը փոխանցվում է հարկային համապատասխան մարմնի հաշվին, որը հանդիսանում է վարչական շրջանը( շրջան-վույդ, թաղապետարան-բուրմիստ, քաղաքապետարան-պրեզիդենտ միեստա): Միջնորդությունը կամ այլ դիմումներ հանձնող անձը պարտավոր է կից ներկայացնել գանձման հավաստագիրը:

**Նման պետտուրքերից են համարվում հետ–ալները.**

- Սահմանված ժամկետով կացության դեպքում թույլտվություն՝ 340 զլոտ.
- Մշտական կացության դեպքում թույլտվություն՝ 640 զլոտ.
- Եվրոպական երկարաժամկետ ռեզիդենտի դեպքում թույլտվություն՝ 640 զլոտ.
- Պետական վիզայի երկարացում՝ 406 զլոտ.
- Շենգենյան վիզայի ֆակուլտատիվ երկարացման դեպքում՝ 30 եվրո
- Վերոնշյալից բացի, այլ որոշումներ, որոնք հետ–ում են վարչական օրենսգրքից՝ 10 զլոտ
- Տեղեկանքի տրամադրում՝ 17 զլոտ
- Փաստաթուղթի տրամադրում՝ հաստատող նշանակված լիազորված անձի մասին կամ տվյալ փաստաթղթի պատճենը՝ 17 զլոտ.

**Եթե սահմանված ժամկետով/մշտական կացության թույլտվության գործավարության մեջ ներառված են երեխաներ կամ այլ անձիք, ովքեր գտնվում են տվյալ օտարերկրացու խնամակալության տակ, ապա վճարումները պետք է կատարվեն յուրաքանչուրի համար առանձին օտարերկրացու կողմից:**

**Եթե կողմը չվճարի նշված պետտուրքը միջնորդության հետ միասին, ապա իր գործավարությունն իրականացնող մարմինը կսահմանի ժամկետ տվյալ տուրքի վճարման համար: Այդ ժամկետը չի կարող լինել 7 օրից պակաս – ավելի քան 14 օր: Եթե նշանակված ժամկետում այդ գանձումները չեն լինի վճարված, ապա ներկայացված միջնորդությունը կվերադարձվի:** Պետտուրքի առարկային վերաբերող մանրամասն տեղեկությունները, պետտուրքի չափը, ինչպես նա– դրանցից ազատման պայմանները գտնվում են **հավելված 2006 թ. նոյմբերի 16-ի**

**օրենքում, որը վերաբերում է պետտուրքերի վճարումներին /Օր, տեղ. 225, կետ 1635 հետագա փոփոխություններով/:**

| |
|---|
| ՊԵՏՏՈՒՐՔԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ |

**Պետտուրքի վերադարձը կարող է տեղ գտնել այն դեպքում, երբ միջնորդող կողմի նկատմամբ, չնայած վճարումների կատարմանը, չի իրականացվել որ–է գործողություն, չի տրվել որ–է որոշում կամ թույլտվություն:** Պետտուրքը չի վերադարձվում **5 տարի** անցնելուց հետո՝ հաշվելով այն տարվա վերջից, երբ կատարվել է մուծումը: Համաձայն պետտուրքի մասին վերոհիշյալ օրենքի 12-րդ հոդվածիենթակետ 1-ի՝ որպես պետտուրքի գործերով իրավասու հարկային մարմին ներկայանում է վարչական շրջանը **(թաղապետարան, քաղաքապետարան)**:

## ԳԼՈՒԽ III

## ՎԻԶԱՅԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ

### 3.1 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ

**Շենգենյան վիզայի կամ պետական վիզայի երկարացման միջնորդությունը տրվում է օտարերկրացու բնակավայրի համապատասխան վոեվոդային**

### 3.2 ՊԵՏԱԿԱՆ ՎԻԶԱՅԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ

Օտարերկրացին, ով գտնվում է Լեհաստանի Հանրապետության տարածքում, կարող է **երկարացնել** վիզայի վավերությունը կամ վիզայով ներառված ժամանակահատվածը, եթե իրականացվում են հետ-ալ **ընդհանուր** պահանջները.

1) դրանից հետ-ում են օտարերկրացու մասնագիտական կամ անձնական շահերը կամ մարդասիրական հարցերը, որոնք չեն թույլատրում իրեն հեռանալ այս տարածքից մինչ- պետական վիզայի վավերության ավարտը, կամ վիզայում սահմանված կացության ժամանակահատվածը.
2) Կամ իրադարձությունների պատճառով միջնորդում է պետական վիզայի երկարացման հարցով, որոնք **կախված չեն օտարերկրացու կամքից**, - չեն եղել կանխատեսելի պետական վիզա ստանալու միջնորդության հանձնման օրը.
3) գործի պայմաններից չի բխում, որ օտարերկրացու **կացության նպատակը** Լեհաստանի Հանրապետության տարածքում կլինի այլ, **քան նա հայտարարել է.**
4) **չեն ներկայանում հանգամանքներ, որոնց պատճառով մերժվում է պետական վիզայի տրամադրումը.**

**Հիվանդանոցում գտնվելը**

Օտարերկրացին, ով գտնվում է հիվանդանոցում - վերջինիս առողջության վիճակը բացառում է Լեհաստանի Հանրապետության տարածքից մեկնելը, ապա երկարացվում է տվյալ պետական վիզայի ժամկետը կամ նրա կացության ժամանակահատվածը, որը ընդգրկված է տվյալ վիզայում մինչ օրը, երբ անձի առողջական վիճակը թույլ կտա լքել տվյալ տարածքը:

### ԿԱՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Պետական վիզան **երկարացվում է մեկ անգամ**: Լեհաստանի Հանրապետության տարածքում **կացության ժամանակահատվածը**, որը համապատասխանում է երկարացված պետական վիզայի ժամկետին, **չի կարող լինել ավելին**, քան նախատեսված պետական վիզան՝ այսինքն **մեկ տարի**:

**ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Վիզայի վավերության ժամկետը ոչ բոլոր դեպքերում է համապատասխանում կացության ժամանակահատվածին, որը տրվում է վիզայով:**

### 3.3 ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱՅԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ

Լեհաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրացուն **կարող են** երկարացնել տրված վիզայի վավերության ժամկետը կամ տվյալ վիզայով տրված կացության ժամանակահատվածը, եթե.

- ներկայացրել է, որ իրենից չկախված կամ մարդասիրական հարցերի պատճառով անհնարին է լքել անդամ երկրների տարածքը մինչ- վիզայի վավերության ավարտը կամ վիզայով թույլատրելի ժամանակահատվածը.
  - **Վերոհիշյալ դեպքում վիզայի երկարացումն անվճար է.**

- Ներկայացնում է փաստացի – **կար-որ անձնական պատճառներ**, որոնք հիմնավորում են վիզայի կամ կացության ժամկետի երկարացումը
    - **Վերոհիշյալ դեպքում վիզայի երկարացման համար մուծվում է 30 եվրո.**

## ԿԱՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Երկարացված վիզայի հիման վրա Լեհաստանի Հանրապետության տարածքում **կացության ժամանակահատվածը** չի կարող լինել ավելի քան **3 ամիս**, որը նախատեսված է տվյալ շենգենյան վիզայով:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Վիզայի վավերացման ժամկետը ոչ բոլոր դեպքերում է համապատասխանում վիզայով սահմանված կացության ժամանակահատվածին:**

## 3.4 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Օտարերկրացին, ով մտադրություն ունի երկարացնել իր կացությունը.

- **Շենգենյան վիզայով**
- **Պետական վիզայով**

պարտավոր է տալ իր բնակության վայրին համապատասխան վոեվոդային վիզայի երկարացման վերաբերյալ միջնորդությունը ոչ **ավելի ուշ քան 3 օր՝ մինչ- վիզայով սահմանված ժամանակահատվածի ավարտը.**

Այն դեպքերում, երբ օտարերկրացին ներկայացրել է, որ **իրենից չկախված կամ մարդասիրական հարցերի պատճառով** անհնարին է լքել անդամ երկրների տարածքը մինչ- վիզայի վավերության ավարտը կամ վիզայով թույլատրելի ժամանակահատվածը, կամ երբ օտարերկրացին գտնվում է **հիվանդանոցում**, միջնորդությունը կարող է հանձնվել **պետական վիզայի կամ շենգենյան վիզայի կողմից նշված կացության ժամկետի վերջին օրը**:

Միջնորդությունը, որը ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ, մնում է **առանց քննության:**

Օտարերկրացին, որ միջնորդել է վիզայի երկարացման հարցով վերոնշյալ ժամկետում, վոեվոդան նրա անձնագրում թողնում է **դրոշմ**, որը հաստատում է միջնորդության հանձնումը: Եթե միջնորդությունը տրվել է սահմանված ժամկետում – միջնորդությունը չունի բացակայող նյութեր կամ թերի տեղեկություններ – լրացվել են սահմանված ժամկետում, ապա **օտարերկրացու կացությունը Լեհաստանի Հանրապետության տարածքում համարվում է օրինական** միջնորդության հանձնման օրվանից մինչ- շենգենյան վիզայի կամ պետական վիզայի երկարացման շուրջ վերջնական որոշում ստանալը:

Եթե Շենգենյան վիզայի կամ պետական վիզայի երկարացման հարցով օտարերկրացու **գործավարությունը** կասեցվում է **վերջինիս խնդրանքով**, ապա նրա **կացությունը** այդ պահից **չի համարվում օրինական**:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.**
**Ունենալով դրոշմը անձնագրում չի տալիս իրավունք օտարերկրացուն որպեսզի նա տեղաշարժվի Շենգենյան այլ պետություններով, սակայն օտարերկրացին իրավունք ունի մեկնել իր երկիրը:**

## 3.5 ՊԱՏԱՍԽԱՆԻ ՁԵՎԸ

Շենգենյան վիզայի կամ պետական վիզայի երկարացման պատասխանը տրվում է որոշման ձ–ով: Շենգենյան վիզայի կամ պետական վիզայի երկարացումը տրվում է անձնագրում սոսնձված ձ–ով:

## 3.6 ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Օտարերկրացին, ով փորձում է երկարացնել **շենգենյան կամ պետական վիզան**, պարտավոր է ներկայացնել իր վավերացրած **անձնագիրը**, **միջնորդությունը** – միջնորդությանը կից հիմնավորումը.

1. **Ակտուալ լուսանկարներՎՆ** դրանք չպետք է լինեն վնասված՝ գունավոր, 35/45 մմ, արված վերջին 6 ամիսների ընթացքում սպիտակ ֆոնի առկայությամբ, դրանք պետք է լինեն պարզ – հստակ, արտացոլող աչքերը – դեմքի վեր–ի հատվածից մինչ– ուսերի վերին հատվածը այնպես, որ դեմքը զբաղեցնի լուսանկարի 70-80 տոկոսը: Լուսանկարում անձը պետք է լինի առանց գլխի հագուստի – մուգ ապակիներով ակնոցների, ուղիղ հայացքով – բաց աչքերով, մազերով չծածկված ճակատով, բնական տեսքով – փակ բերանով.
2. **Փաստաթղթեր՝ հաստատող.**
   - **Կացության նպատակը** – շենգենյան կամ պետական վիզայի երկարացման պահանջը,
   - Ունենալ բժշկական ապահովագրություն, որը համապատասխան կլինի օրենքներին – հետ–ում է բժշկական խնամակալության օրենքից, որոնք ֆինանսավորվում են պետական միջոցներով կամ ճանապարհորդական բժշկական ապահովագրումից, որի մինիմալ գումարն է 30 000 եվրո, որը վավեր է Լեհաստանի հանրապետության տարածքում օտարերկրացու պլանավորած կացության ժամկետի ընթացքում – մարում է բոլոր ծախսերը՝ բխող առողջական պատճառներից, բժշկական անհապաղ օգնություն ստանալու, անսպասելի հիվանդանոցում բուժման կամ մահի հետ կապված դեպքում, որտեղ ապահովագրողը պարտավոր է կատարել շահառուի բոլոր վճարումները՝ բխող բժշկական ապահովագրումով նշված գումարի, եթե նա երկարացնում է իր պետական վիզան:
   - **Ունենալ բժշկական ապահովագրություն**՝ 30000 եվրո մինիմալ գումարով՝ **շենգենյան վիզայի երկարացման դեպքում**
   - Միջնորդությունում հայտնած այլ հանգամանքները

## ԱՆՁՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Շենգենյան կամ պետական վիզայի երկարացման նպատակ ունեցող օտարերկրացին պետք է ներկայացնի անձնագիր՝ համապատասխանող հետ–ալ չափանիշներին.**

1) Անձնագրի **վավերության ժամկետը** անցնում է ոչ ավելի շուտ քան **երեք ամիսը** մինչ– դիմորդի վիզայի միջնորդության ներկայացումը:
2) Պետք է ունենա առնվազն երկու ազատ էջ.
3) Տրվել է վերջին 10 տարվա ընթացքում.

## ԳԼՈՒԽ IV

## ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Սահմանված ժամկետով կացության թույլտվություն ստանալ կարելի է փորձել, եթե ներկայանում են Լեհաստանի Հանրապետության տարածքում բնակվելու համար հիմնավորված հանգամանքներ **ոչ ավելի քան 3 ամիս ժամանակահատվածի սահմաններում**:

### 4.1 ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ՈՐՊԵՍ ՀԻՄՔ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

#### 1. ԱՇԽԱՏԱՆՔ

Այն դեպքում, եթե օտարերկրացին **ունի աշխատանքային թույլտվություն կամ գրավոր հավաստագիր գործատուից**, որը վերաբերում է օտարեկրացուն աշխատանք տալու մտադրությանը, եթե աշխատանքի թույլտվություն չի պահանջվում:

#### 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Լեհաստանի Հանրապետությունում գործող օրենքների շրջանակներում, որոնք ծառայում են պետական տնտեսության շահերին, մասնավորապես ներդրումների աճին, տեխնոլոգիաների տրանսֆերին, օգտակար նորարարություններին կամ նոր աշխատատեղերի բացմանը:

#### 3. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՆԵՐԴՆՈՒՄ

Երբ դիմորդը համարվում է վաստակաշատ ստեղծագործական ներդրում ունեցող անձ – մտադրություն ունի Լեհաստանի Հանրապետության տարածքում շարունակել ստեղծագործական գործունեությունը.

#### 4. ՈՒՍՈՒՄ ԵՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍՏԱԺ

Իրականացվում են Եվրամիության ծրագրերի շրջանակներում.

#### 5. ՄՆԱԼՈՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄ

Միգրացիայի շրջանակներում աշխատողի հետ համատեղ ապրելու մտադրություն ունենալու դեպքում, որի մասին նշված է Եվրոպական սոցիալական խարտիայում՝ ընդունված Թուրինում 1961 թ. հոկտեմբերի 18-ին (Օր. տեղ. 1999 թ. թիվ 8, կետ. 67),

#### 6. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԵՏ

#### 7. ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ ՄԻԱՎՈՐՈՒՄ

Երբ օտարերկրացին գտնվում է Լեհաստանի Հանրապետության տարածքում կամ այդ տարածում ընտանիքի հետ միանալու մտադրությամբ:

#### 8. ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ՝ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Երբ անչափահաս երեխան գտնվում է վերոհիշյալ տարածքում առանց խնամքի:

## 9. ԼԻՆԵԼ ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒ ԿԻՆ/ԱՄՈՒՍԻՆ ԿԱՄ ՉԱՓԱՀԱՍ ԶԱՎԱԿ

Երբ օտարերկրացին գտնվում է Լեհաստանի Հանրապետության տարածքում առնվազն 5 տարվա սահմանված կացության թույլտվության հիման վրա՝ որը ստացել է 7-րդ կետում նշված հիմունքներով (ընտանիքի միավորում)

## 10. ԱՅՐԻ ԴԱՌՆԱԼԸ, ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԲԱԺԱՆՈՒՄ ԿԱՄ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԾՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆԴԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Այն դեպքում, երբ օտարերկրացին Լեհաստանի Հանրապետության տարածքում գտնվում է սահմանված ժամկետով ժամանակավոր կացության թույլտվության հիման վրա՝ որը ստացել է 7-րդ կետում նշված հիմունքներով (ընտանիքի միավորում), **որոնք բխում են օտարերկրացու կար–որ շահերից:**

## 11. ԱՅՐԻ ԴԱՌՆԱԼԸ ԿԱՄ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այն դեպքում, երբ օտարերկրացին Լեհաստանի Հանրապետության տարածքում գտնվում է սահմանված ժամկետով ժամանակավոր կացության թույլտվության հիման վրա՝ որը ստացել է 6-րդ կետում նշված հիմունքներով (Լեհաստանի քաղաքացու հետ ամուսնություն), **որոնք բխում են օտարերկրացու կար–որ շահերից:**

## 12. ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ՝ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Երբ անչափահաս օտարերկրացին հանդիսանում է սահմանված ժամկետով կացության թույլտվություն ունեցող օտարերկրացու զավակ, որը ծնվել է Լեհաստանի Հանրապետության տարածքում:

## 13. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԵԶԻԴԵՆՏԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՏՐՎԱԾ ԱՅԼ ԵՄ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այն դեպքում, երբ օտարերկրացին նպատակ ունի աշխատելու կամ տնտեսական գործունեություն ծավալելու այդ շրջանակներում Լեհաստանի Հանրապետությունում գործող օրենքների համաձայն, սկսում է սովորել բուհում կամ շարունակել իր ուսումը կամ մասնագիտության հետ կապված ուսումը կամ այլ հիմունքներ, որոնք տալիս են իրեն Լեհաստանի Հանրապետության տարածքում բնակության համար հնարավորություն:

## 14. ՄՆԱԼ ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄ, ՈՐԻ ՄԱՍԻՆ ՆՇՎՈՒՄ Է ԿԵՏ 13-ՈՒՄ

Այն դեպքում, երբ օտարերկրացին կետ 13-ով սահմանված ԵՄ անդամ հանդիսացող օտարերկրացու ընտանիքի անդամ է, ում հետ գտնվում էր ԵՄ անդամ այլ պետության տարածքում – ցանկանում է գոյակցել կամ միանալ նրան:

## 15. ՄԱՐԴԿԱՆՑ ԱՌԵՎՏՐԻ ԶՈՀ ԴԱՌՆԱԼԸ

Այն դեպքում, երբ օտարերկրացին մարդկանց առ–տրի զոհ է դառնում, համաձայն Խորհրդի «Մարդկանց առ–տրի դեմ պայքարի» 2002 թ. հուլիսի 19-ի որոշման – համապատասխանում է հետ–ալ պահանջներին.

1. Գտնվում է Լեհաստանի Հանրապետության տարածքում.

2. Սկսել է համագործակցել մարդկանց առ–տրի դեմ պայքարը իրականացնող նման վարույթի իրականացման համար իրավասու մարմինների հետ.

3. Խզել է կապը անձերի հետ, որոնք հնարավոր կապ են ունեցել մարդկանց առ–տրի հետ.

### 16. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿԱՄ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՍԿՍԵԼԸ ԿԱՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԸ

Այն դեպքում, եթե օտարերկրացին գտնվում է կամ Լեհաստանի Հանրապետության տարածքում է բարձրագույն կամ դոկտորական ստացիոնար բուհերում ուսումնառությունը սկսելու կամ շարունակելու մտադրությամբ, այսուհետ– անվանվող«բուհ», ինչպես նա– այն դեպքում, երբ դիմել է ԵՄ անդամ այլ պետության բուհ, որի նպատակն է շարունակել կամ լրացնել Լեհաստանի Հանրապետության տարածքում:

### 17. ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Երբ օտարերկրացին հանդիսանում է գիտնական, ով գտնվում է կամ Լեհաստանի Հանրապետության տարածքում է գիտական ուսումնասիրություն իրականացնելու համար համաձայն պայմանագրի՝ հաստատված այն նախարարի միջոցով, որը զբաղվում է համապատասխան գիտությունով:

### 18. «ԳԻՏՆԱԿԱՆ» ԱՆՎԱՆՈՒՄՈՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՈՒՆԵՆԱԼԸ

Երբ օտարերկրացին ունի **սահմանող միանման կացության փաստաթուղթ**, որի մասին նշված է 2002 թ. հունիսի 13-ի ԵՄ Խորհրդի թիվ 1030/2002 առաջին հոդվածի 2-րդ ենթակետի, տառ a-ի, երրորդ պետությունների քաղաքացիների համար(Օր. տեղ. UE L 157, 15.06.2002, էջ. 1-7) **նշված «գիտնական»**, որը իրեն տրվել է Եվրոպական Միության անդամ այլ պետության կողմից, եթե պայմանագրում նշվում է այցելության մասին՝ նա– Լեհաստանի Հանրապետության տարածքում գիտական ուսումնասիրություն իրականացնելու համար:

### 19. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

**Այն դեպքում, երբ Թուրքիայի Հանրապետության քաղաքացին ունի թույլտվություն Լեհաստանի Հանրապետության տարածքում աշխատելու համար՝** ամրագրված իրավական ակտերով՝ հաստատված Եվրոպական տնտեսական համայնքի – Թուրքիայի միջ– 1963 թ. սեպտեմբերի 12-ին Անկարայում ստորագրված համաձայնագրի (Օր. Տեղ. ԵՄ L 217 29.12.1964, էջ. 3687).

Բացի այդ, այլ հիմունքների դեպքում, որոնց հիման վրա **կարելի է օտարերկրացիներին տրամադրել** սահմանված ժամկետով կացության թույլտվություն:

### 20. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

### 21. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

### 22. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԿԱՊԵՐ

Այն դեպքում, եթե օտարերկրացին մտադրություն ունի միանալու կամ համատեղ ապրելու Եվրամիության անդամ պետության կամ Եվրամիության

ազատ առ-տրի համաձայնագրի՝Եվրոպական տնտեսական տարածքի համաձայնագրի անդամ պետությունների կամ Շվեցարական համադաշնության քաղաքացու հետ ով ապրում է Լեհաստանի Հանրապետության տարածքում:

### 23. ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ, ՀՈԳ-ՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԿԱՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ(KOŚCIOŁ) ԵՒ ԱՅԼ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՔ

Այն դեպքում, երբ օտարերկրացին համարվում է հոգ-որական, հոգ-որ համայնքի անդամ, կամ եկեղեցիներում կամ այլ կրոնական համայնքներում կրոնական գործառույթներ իրականացնող անձ, որոնց կարգավիճակը կարգավորվում է միջազգային պայմանագրերի համաձայն կամ պետության – եկեղեցու կամ այլ կրոնական միությունների միջ- հարաբերությունները կարգավորող օրենքներով կամ որոնք գտնվում են եկեղեցիների – այլ կրոնական միությունների ռեգիստրում, – իր կացությունը Լեհաստանի Հանրապետությունում կապված է իրականացվող գործառույթներով կամ դրանց կազմակերպման աշխատանքով:

### 24. ԱՅԼ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Դեպքում, եթե օտարերկրացին կներկայացնի այլ հանգամանքներ, որոնք կհիմնավորեն նրա կացությունը Լեհաստանի Հանրապետության տարածքում – ներառված չեն վերոհիշյալ տարբերակներում:

## 4.2 ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**Սահմանված ժամկետով կացության թույլտվություն կարելի է տալ օտարերկրացին, ով Լեհաստանի Հանրապետության տարածքում անօրինական է, եթե.**

1. Եթե լեհական օրենսդրությունից պահանջում է, որ **օտարերկրացին անձամբ ներկայանա պետական իշխանության մարմին**;
2. **Բացառիկ անձնական դեպքում** պահանջվում է օտարերկրացու ներկայությունը Լեհաստանի Հանրապետության տարածքում:
3. Բխում է այն **Լեհաստանի Հանրապետության շահերից**;
4. Մարդկանց առ-տրի դեմ պայքարի գործերով իրավասու մարմինը հաստատում է, որ **օտարերկրացին մարդկանց առ-տրի հավանական զոհ է** 2002 թ. հուլիսի 19-ի Խորհրդի մարդկանց առ-տրի դեմ պայքարի որոշման հիման վրա (Տեղ, Օր. WE L 203, 01.08.2002, էջ 1; Օր, Տեղ. ԵՄ Լեհական հատուկ հրատարակություն, բաժին 19, հատոր 6, էջ 52).

## 4.3 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օտարերկրացին պարտավոր է միջնորդել սահմանված ժամկետով ժամանակավոր կացության թույլտվություն ստանալու հարցով իրավասու վոեվոդային ըստ իր բնակության վայրի **առնվազն 45 օր** առաջ մինչ- վիզայում սահմանված կացության ժամկետի կամ **նախկին կացության թույլտվության ավարտը**: **45 օրյա ժամկետը չի վերականգնվում**:

Եթե միջնորդությունը լրացվել է առանց թերությունների – ժամկետից ոչ ուշ, ապա նրա անձնագրի մեջ վոեվոդան **դրոշմում է**, ինչը նշանակում է, որ օտարերկրացու

գործին ընթացք է տրվել: **Օտարերկրացու կացությունը այդ ժամանակահատվածում մինչ– վերջնական որոշում ստանալը համարվում է օրինական:**

Եթե սահմանված ժամկետով ժամանակավոր կացության թույլտվության **գործավարությունը կասեցվել է օտարերկրացու խնդրանքով,** ապա իր **կացությունը** այդ ժամանակահատվածից **համարվում է անօրինական:**

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:
**Ունենալով դրոշմը անձնագրում չի տալիս իրավունք օտարերկրացուն որպեսզի նա տեղաշարժվի Շենգենյան այլ պետություններով, սակայն օտարերկրացին իրավունք ունի մեկնել իր երկիրը:**

Այն դեպքում, եթե **միջնորդությունը** հանձնվել է իր վիզայի կամ նախկինում տրված կացության թույլտվության **սահմանված ժամկետից 45 օրից ավելի քիչ ժամանակահատվածում,** իսկ գործավարությունը չի ավարտվել իր վիզայի կամ նախկինում տրված կացության թույլտվության սահմանված վավերության ժամկետում, ապա օտարերկրացին պարտավոր է լքել Լեհաստանի Հանրապետության տարածքը մինչ վիզայում նշված ժամկետի կամ ժամանակավոր կացության թույլտվության ավարտը: Լեհաստանի Հանրապետության տարածքը չլքելու դեպքում օտարերկրացու կացությունը Լեհաստանում կհամարվի անօրինական, իսկ վոեվոդան պարտավոր է ներկայացնել սահմանված ժամկետում ժամանակավոր կացության թույլտվության մերժում:

Օտարերկրացին պատրավոր է **լքել Լեհաստանի Հանրապետության տարածքը** մինչ– սահմանված ժամկետով ժամանակավոր կացության թույլտվության ավարտը, եթե չի ստացել սահմանված ժամկետով ժամանակավոր կացության կամ մշտական բնակցության կամ Եվրոպական երկարաժամկետ ռեզիդենտի հերթական կացության թույլտվությունը:

Լեհաստանի Հանրապետության տարածքում կացությունը առանց վիզայի կամ սահմանված ժամկետով ժամանակավոր կացության կամ մշտական բնակցության կամ Եվրոպական երկարաժամկետ ռեզիդենտի կացության թույլտվության, ինչպես նա– ապօրինի աշխատելը կամ տնտեսական գործունեություն իրականացնելը բերում է օտարերկրացուն **կամավոր Լեհաստանի Հանրապետության տարածքը լքելու որոշմանը կամ Լեհաստանի Հանրապետության տարածքից նրան վտարելու որոշման ներկայացմանը –** 5 տարի կրկին պետություն մուտք գործելու արգելքով: Այն օտարերկրացին, ում նկատմամբ ներկայացվել է Լեհաստանի տարածքից վտարման մասին որոշում, նրա տվյալները փոխանցվում են SIS ծրագրին, որպեսզի նրան արգելվի վերոնշված ժամկետում Շենգենյան գոտու տարածքի երկրներ մուտք գործելը

## 4.4 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ

Սահմանված ժամկետով ժամանակավոր կացության երկարացման միջնորդությունը տրվում է օտարերկրացու **բնակավայրին համապատասխան վոեվոդային**, իսկ օտարերկրացու արտերկրում գտնվելու դեպքում՝ **իրավասու վոեվոդային հյուպատոսի միջնորդությամբ՝ հաշվի առնելով այն բնակավայրը, որտեղ օտարերկրացին մտադրություն ունի բնակվելու:**

## 4.5 ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Օտարերկրացին պարտավոր է.

- Ներկայացնել **վավերացրած անձնագիր**: Բացառիկ հիմնավորված դեպքերում, երբ օտարկերացին չունի վավերացրած անձնագիր – ի վիճակի չէ ստանալ այն, կարող է ներկայացնել իր **անձը հաստատող այլ փաստաթուղթ**;

- Յանձնել լրացրած միջնորդությունը, ինչպես նա– դրան կից.

4 Ակտուալ լուսանկարներ - դրանք չպետք է լինեն վնասված՝ գունավոր, 35/45 մմ, արված վերջին 6 ամիսների ընթացքում սպիտակ ֆոնի առկայությամբ, դրանք պետք է լինեն պարզ – հստակ, արտացոլող աչքերը – դեմքի վեր–ի հատվածից մինչ– ուսերի վերին հատվածը այնպես, որ դեմքը զբաղեցնի լուսանկարի 70-80 տոկոսը: Լուսանկարում անձը պետք էլինի առանց գլխի հագուստի – մուգ ապակիներով ակնոցների, ուղիղ հայացքով – բաց աչքերով, մազերով չծածկված ճակատով, բնական տեսքով – փակ բերանով.

- Միջնորդությամբ ներկայացվող անձը հաստատող փաստաթղթերը, ինչպես նա– սահմանված ժամկետով ժամանակավոր կացություն թույլտավություն ստանալու հիմնավորումը – հանգամանքները,:
- Պետտուրքի վճարման անդորրագիրը.

- Փաստաթղթեր, որոնք հաստատում են բժշկական ապահովագրություն ունենալը , որը համապատասխան կլինի օրենքներին – հետ–ում է բժշկական խնամակալության օրենքից, որոնք ֆինանսավորվում են պետական միջոցներով կամ ճանապարհորդական բժշկական ապահովագրումից: Վերոնշյալ փաստաթղթերը հարկ է կցել այն դեպքում, երբ միջնորդվում է ժամանակավոր կացության թույլտվություն ստանալու համար՝ հաշվի առնելով հետ–ալ հանգամանքները.

  - Աշխատանք (կետ 1); տնտեսական գործունեություն (կետ 2), ընտանիքի միավորում (կետ 7), Եվրոպական երկարաժամկետ ռեզիդենտի կացության թույլտվություն ունենալը այլ Եվրամիության անդամ պետության կողմից (կետ 13), բարձրագույն ուսումնառության մեկնարկումը կամ շարունակումը (կետ 16), ուսումնառություն (կետ 20), մասնագիտական վերապատրաստում (կետ 21), ընտանեկան բնույթի կապեր (կետ 22), այլ հանգամանքներ (կետ 24) **ինչպես նա–**
  - Այն դեպքում, եթե առկա է օտարերկրացու ամուսին կամ չափահաս զավակ, որի մասին ասվում է հոդված 54-ում (կետ 9), օտարերկրացու ընտանիքի անդամ, որի մասին նշվում է կետ 13-ում (կետ 14), գիտնականներ (կետ 17), օտարերկրացի, ով ունի կացության քարտ, որում գրված է «գիտնական»(կետ 18), հոգ–որականներ, հոգ–որ կառույցի անդամներ, կամ եկեղեցիներում (kościoł) – կրոնական խմբերում կրոնական գործառույթներ իրականացնող անձիք (կետ 23).

- պարբերական – ստաբիլ եկամուտների աղբյուրները հաստատող փաստաթղթեր , որը բավարար է իր – իր խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամների ապրուստի համար: Վերոնշյալ փաստաթղթերը հարկ է կցել ժամանակավոր կացության թույլտվության դեպքում, հաշվի առնելով.
  - Աշխատանք (կետ 1), տնտեսական գործունեություն (կետ 2), ընտանիքի միավորում (կետ 7), Եվրոպական երկարաժամկետ ռեզիդենտի կացության թույլտվություն ունենալը այլ Եվրամիության անդամ պետության կողմից (կետ 13), բարձրագույն ուսումնառության մեկնարկումը կամ շարունակումը (կետ 16), ուսումնառություն (կետ 20),

մասնագիտական վերապատրաստում (կետ 21), ընտանեկան բնույթի կապեր (կետ 22), այլ հանգամանքներ (կետ 24) **ինչպես նա–**

- Այն դեպքում, եթե առկա է օտարերկրացու ամուսին կամ չափահաս զավակ, որի մասին ասվում է հոդված 54-ում (կետ 9), օտարերկրացու ընտանիքի անդամ, որի մասին նշվում է կետ 13-ում (կետ 14),

➢ **Կացության – իր երկիր վերադառնալու համար բավարար ֆինանսական միջոցներ ունենալը հաստատող փաստաթղթեր** Վերոնշյալ փասթաթղթերը հարկ է կցել այն դեպքում, երբ փորձ է կատարվում սահմանված ժամկետով ժամանակավոր կացության թույլտություն ստանալ, հաշվի առնելով հետ–ալը.

- բարձրագույն ուսումնառության մեկնարկումը կամ շարունակումը (կետ 16).
- ուսումնառություն (կետ 20)**, ինչպես նա–**
- հետ–ալ դեպքում՝ գիտնականներ (կետ 17), օտարերկրացիներ, ովքեր ունեն կացության քարտ, որում գրված է «գիտնական»(կետ 18)

➢ **Բնակարանի զբաղեցման վերաբերյալ իրավական փաստաթուղթ**, որը օտարերկրացին զբաղեցնում է կամ բնակվելու մտադրություն ունի: Համաձայնագիրը, որում նշված է, որ օտարերկրացուն բնակարանը տրամադրվում է ուղակի, **իրավական ուժ չունի**՝ բացառությամբ, **եթե տրամադրողը օտարերկրացու ավագ ծնողները, զավակները, ամուսինը, ամուսնու ծնողները կամ օտարերկրացու եղբայրը կամ քույրն են:**

Բնակարանի նկատմամբ **օրինական ուժը** հաստատող փաստաթուղթը հարկ է կցել սահմանված ժամկետով ժամանակավոր կացության թույլտվությանը՝

- Աշխատանք (կետ 1), տնտեսական գործունեություն (կետ 2), ընտանիքի միավորում (կետ 7), Եվրոպական երկարաժամկետ ռեզիդենտի կացության թույլտվություն ունենալը այլ Եվրամիության անդամ պետության կողմից (կետ 13), բարձրագույն ուսումնառության մեկնարկումը կամ շարունակումը (կետ 16), ուսումնառություն (կետ 20), մասնագիտական վերապատրաստում (կետ 21), ընտանեկան բնույթի կապեր (կետ 22), այլ հանգամանքներ (կետ 24) **ինչպես նա–**
- Այն դեպքում, եթե առկա է օտարերկրացու ամուսին կամ չափահաս զավակ, որի մասին ասվում է հոդված 54-ում (կետ 9), օտարերկրացու ընտանիքի անդամ, որի մասին նշվում է կետ 13-ում (կետ 14).

## ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Անձի օրինական կարգավիճակը, պարբերաբար – կայուն եկամուտը, ինչպես նա– բժշկական ապահովագրությունը հաստատող փաստաթղթերի ներկայացումը չի** վերաբերում Լեհաստանի Հանրապետության քաղաքացիների ամուսիններին, օտարերկրացու անչափահաս զավակին, ով ունի սահմանված ժամկետով ժամանակավոր կացության թույլտվություն – ծնվել է Լեհաստանի Հանրապետության տարածքում, օտարերկրացիներին, որոնք մասնակցում են Եվրոպական Միության կողմից իրականացրած մասնագիտական վերապատրաստումներին – ուսումնական ծրագրերին, ինչպես նա– մարդկանց առ–տրի հետ–անքով տուժածներին:

## 4.6 ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄ

Օտարերկրացու ընտանիքի անդամ են համարվում

1) Անձիք, ովքեր իր հետ են ապրում **ամուսնական կապով**՝ ճանաչված Լեհաստանի Հանրապետության օրենսդրության կողմից.

2) Օտարերկրացու – իր հետ Լեհաստանի Հանրապետության օրենսդրության կողմից ճանաչված ամուսնական կապով ապրող անձի **անչափահաս զավակը**, ինչպես նա– որդեգրված զավակը:

